ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, հ. LXII, №1, 60-61

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Լ.Հ. Վալեսյանի "Աշխարհագրական կանխատեսում: Մեթոդաբանական հիմունքները կիրառական և կառուցողական նշանակությունը" (Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2008թ., 262 էջ) մենագրության վերաբերյալ

Լ. Վալեսյանի հեղինակությամբ լույս ընծայված գրախոսվող աշխատանքը աշխարհագրական կանխատեսումներին նվիրված հիմնարար մենագրություն է: Հեղինակը աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ մանկավարժական ակադեմիայի ակադեմիկոս, ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պատվավոր վարիչն է:

Տարբեր գիտական ուղղությունների փոխշփման և փոխլրացման արդյունքում ձևավորված գիտության այս նորագույն ուղղությանը նվիրված սույն աշխատանքում հեղինակը հանգամանորեն անդրադառնում է աշխարհագրական կանխատեսմանը վերաբերվող իմացաբանական, գիտատեսական և կիրառական հիմնական հարցերին:

Աշխատանքում մանրակրկիտ քննարկվում են աշխարհագրական կանխատեսման էությունը, կառուցվածքը, մակարդակները և հատկանիշները:

Հեղինակը, առանձնացնելով աշխարհագրական կանխատեսման երկու զուգահեռ զարգացող ուղղությունները՝ համաաշխարհագրական և ճյուղային աշխարհագրական, միաժամանակ անդրադարձ է կատարում աշխարհագրական կանխատեսման 11 տարատեսակներին՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի նշանակությանը:

Մենագրության մեջ բազմակողմանիորեն հիմնավորվում է այն դրույթը, որ աշխարհագրական կանխատեսումը ռեգիոնալ քաղաքականության և տարածքային կառավարման համար ծառայում է որպես գիտատեսական հիմք: Միաժամանակ այդ դրույթը քննության է ենթարկվում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից լայնորեն շրջանառվող աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական, իհարկե նաև միջպետական ու ներպետական կարևորություն ունեցող Կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում:

Ռեգիոնալ քաղաքականության և տարածքային կառավարման արդյունավետության հետ աշխարհագրական կանխատեսման սերտ կապի անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորվում է հետևյալ մեթոդաբանական մոտեցումով: Աշխարհագրական կանխատեսման օբյեկտները, անկախ դրանց ծագումից, բովանդակությունից ու ենթակարգային մակարդակից, գոյատևում և զարգանում են ներքին սեփական օրենքներով ու օրինաչափություններով: Հաճախ աշխարհագրական օբյեկտների ու երևույթների ընթացիկ զարգացումը, առավել ևս ապագան դառնում են անկանխատեսելի, հետևապես և անկառավարելի: Եվ այսօր մարդկությունը ականատես է համամոլորակային, տարածաշրջանային ու տեղական մասշտաբով ռեգիոնալ քաղաքականության ձախողումների և կառավարման ցածր արդյունավետության բազմաթիվ օրինակների:

Միանգամայն տեղին է վարվել հեղինակը իր գրքի բնաբան ընտրելով գիտական աշխարհում լայն տարածում ունեցող հետևյալ միտքը. «Ըմբռնել, որպեսզի կանխատեսել, կանխատեսել, որպեսզի տիրանալ, ահա կանխատեսագիտության (պրոգնոստիկայի) հիմնական կրեդոն»: Հեղինակն իրավացի է, երբ սրում է այն հարցը, որ մեզանում լայն տարածում ստացած տեղական և արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող տարբեր տեսակի զարգացման, այդ թվում և ռեգիոնալ զարգացման ծրագրերն ու պլանները աչքի չեն ընկնում ներդրման բարձր արդյունավետությամբ, և դրա պատճառներից մեկը նա համարում է աշխարհագրական կանխատեսման ցածր մակարդակը կամ ընդհանրապես բացակայությունը:

Քննարկման առանձին նյութ են դարձել աշխարհագրական կանխատեսման գիտական հասկացությունները, որոնցից հեղինակն ուրույն շեշտադրում է կատարում աշխարհագրական օբյեկտ, հասարակության տարածքային կազմակերպում և ռեգիոնալ պլանավորում,

աշխարհագրական տարածություն հասկացությունների բովանդակային կողմի վրա, կատարում համեմատություններ, բերում օրինակներ դրանց կիրառման ոլորտներից:

Գրքի վերջին բաժինը նվիրված է աշխարհագրական կանխատեսման ամենակարևոր, իր բովանդակությամբ առավել բարդ և միաժամանակ հասարակական մեծ կարևորություն ունեցող ուղղություններից մեկին՝ սոցիալ-տնտեսաաշխարհագրական (կամ հասարակական-աշխարհագրական) կանխատեսմանը, որի էությունը տարածքային հասարակական և բնատեխնիկական համակարգերի զարգացման գործոնների, ապագա վիճակի որոշումն ու գնահատումն է:

Ընդհանուր առմամբ պրոֆ. Լ.Վալեսյանի սույն աշխատությունը հայ ընթերցողին ներկայացնում է ամբողջական մեթոդաբանական ու տեսական մոտեցումներ, որոնք նոր տեսանկյունից են բացահայտում աշխարհագրական կանխատեսման և ընդհանրապես տեսականորեն վերազինված աշխարհագրական գիտությունների համակարգի գիտաճանաչողական և կառուցողական ներուժը:

Այս ամենը գալիս են հավաստելու, որ պրոֆեսոր Վալեսյանի այս մենագրությունը հրապարակ է իջել ճիշտ ժամանակին և լավագույն օգնություն է ոչ միայն աշխարհագրության և դրա հարակից գիտությունների ներկայացուցիչներին և ուսանողությանը, այլև տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտներում զբաղված, ռեգիոնալ քաղաքականության և տարածքի կազմակերպման բնագավառին առնչվող պրակտիկ աշխատողներին:

աշխ.գ.դոկտոր Ռ. Հ. Ռևազյան

աշխ.գ.թեկնածու Կ. Բ. Ալեքսանյան